

ՏՎԵԱ Տրանզակտ Վերլուծության Եվրոպական Ասոցիացիա

ՏՎԵԱ-ի Էթիկական կոդեքս¹

Ընդունված է ՏՎԵԱ-ի պատվիրակների մեծամասնությամբ 02. 07. 2007թ.

Ներածություն

ՏՎԵԱ-ի Էթիկական կոդեքսը նախատեսված է ՏՎԵԱ-ին անդամակից ազգային ասոցիացիաների և ՏՎԵԱ-ի բոլոր անդամների կողմից որպես ուղեցույց օգտագործման համար: Այն նպատակ ունի օգնել ՏՎԵԱ-ի անդամներին էթիկային համապատասխան գործել՝ հոգեթերապիայի, խորհրդատվության, կազմակերպչական և կրթական ոլորտներում աշխատելիս:² Ցանկացած ազգային ասոցիացիայի խնդիրը կայանում է նրանում, որպեսզի համապատասխանեցնի ազգային դեոնոլոգիական կոդեքսը այս Կոդեքսին:

Ավելին, այս Կոդեքսը տեղեկացնում է հասարակայնությանը, թե այս համատեքստերում ինչ վարքագիծ կարելի է ակնկալել ՏՎԵԱ-ի անդամներից:

ՏՎԵԱ-ին անդամակից ազգային ասոցիացիաները ընդունում են ՏՎԵԱ-ի Էթիկական կոդեքսը և օգտագործում են այն որպես հղման համակարգ իրենց անդամների հետ կապված կոնկրետ իրավիճակների վերլուծության համար: ՏՎԵԱ-ի բոլոր անդամները իրենց պրակտիկայում պարտավոր են հետևել այս Կոդեքսին: Հակառակ դեպքում ազգային ասոցիացիաների խնդիրն է սանկցիաներ մշակել:³

Այս Կոդեքսը բաղկացած է երեք բաժնից: Առաջին բաժինը Կոդեքսի ներածությունն է, որը պարունակում է էթիկայի վերաբերյալ հիմնական հայացքների համակարգը: Երկրորդ բաժինը վերաբերում է Կոդեքսի բուն էությանը. նրանում պարզաբանվում են հիմնարար արժեքների և նրանց հետ առնչվող էթիկական սկզբունքների սահմանումները: Երրորդ բաժինը վերաբերում է արժեքների և սկզբունքների պրակտիկ կիրառմանը:

¹ Այս Կոդեքսը փոխարինում է ՏՎԵԱ-ի բոլոր նախորդ կոդեքսները: Նրանում ընդգրկված են նախորդ էթիկական կոդեքսի բոլոր նորմերը, սակայն նրա մեջ շեշտը դրվում է մասնագիտական էթիկական վարքի չափանիշների վրա: Արժեքները և հարակից էթիկական սկզբունքները այն հիմնապայմանն են, որի վրա կառուցվում է էթիկական վարքը և որն օգնում է տարբերակել ոչ էթիկական վարքագիծը: Այս Կոդեքսը ստեղծվել է ՏՎԵԱ-ի էթիկայի հանձնախմբի համագործակցությամբ, համաձայնությամբ և մտորումների շնորհիվ (Barbara Classen, Brigitte Evrard, Margarethe Podlesch, Ritva Piironen, Jacqueline Dossenbach, Valentin Lapanja Furlan): Կոդեքսի հիմնական բովանդակությունը կազմվել է ՏՎԵԱ-ի էթիկայի հանձնաժողովի ենթախմբի կողմից, որի կազմի մեջ մտնում տարբեր երկրներ ներկայացնող հետևյալ անդամներ. Robin Walford (համակարգող), Vladimir Gusakovskiy, Claude-Marie Dupin, Sabine Klingenberg, և հատկապես մեծ ներդրում ունի Carla de Nitto-ն:

² Պրակտիկ մասնագետ տերմինը այս Կոդեքսում օգտագործվում է ՏՎԵԱ-ի բոլոր այն անդամների նկատմամբ, որոնք օգտագործում են ՏՎ-ը և/կամ այլ կոնցեպցիա որպես անհատներին, զույգերին, խմբերին և կազմակերպությունները հասկանալու և փոփոխելու մոդել: "Այցելու" բառը նշանակում է ցանկացած օգտագործող, պացիենտ, ուսանող, խումբ կամ կազմակերպություն, որը օգտվում է ՏՎԵԱ-ի անդամների մատուցած մասնագիտական ծառայություններից:

³ Սանկցիաները կարող են հասնել անդամությունից ժամանակավոր կամ վերջնական զրկման:

Բաժին I. Էթիկայի ընդհանուր հայեցակարգը

- I.1. Էթիկայի սահմանումը*
- I.2. Հիմնական դրույթներ*
- I.3. Մոտեցում Էթիկական կողքսի նկատմամբ*
- I.4. Գլխավոր նպատակներ*
- I.5. Պարտավորություններ*
 - I.5.1. ՏՎԵԱ-ի անդամակից ազգային ասոցիացիաների պարտավորությունները*
 - I.5.2. ՏՎԵԱ-ի անդամների պարտավորությունները*

Բաժին II. Էթիկական կողքսի բուն էությունը

- II.1. Հիմնարար արժեքներ*
- II.2. Հիմնարար էթիկական սկզբունքներ*
- II.3. ՏՎԵԱ-ի Էթիկական կողքսի ուղեցույց*

Հավելված 1. Մարդու իրավունքների հռչակագիր

Հավելված 2. ՏՎԵԱ-ի Էթիկական կողքսի հիմնական կետերի արժեքների և էթիկական սկզբունքների ու վարքի կիրառման օրինակներ.

- 2.1. Հոգեթերապիա*
- 2.2. Խորհրդատվություն*
- 2.3. Կրթություն*
- 2.4. Կազմակերպություն*
- 2.5. Թրեյնինգներ*

Բաժին I. Էթիկայի ընդհանուր հայեցակարգը

1.1. Էթիկայի սահմանումը

Էթիկան⁴ բառի ամենալայն իմաստով փիլիսոփայական գիտություն է, որն ուսումնասիրում է մարդկանց արարքները, այդ թվում բարոյական մտադրությունները և մարդու կամքի արտահայտությունները: Էթիկան⁵ ենթադրում է գործելակերպի ընտրության կարողություն: Այն ներառում է սեփական չափանիշների հիման վրա ընտրություն կատարելու կարողություն (սուբյեկտիվ էթիկա) և այլ մարդկանց տեսակետները հաշվի առնելով՝ ընտրություն կատարելու կարողություն (միջսուբյեկտային էթիկա):

Դեոնոլոգիան (մասնագիտական էթիկան) ուսումնասիրում է պրակտիկ մասնագետների էթիկապես գործելու բարոյական պարտավորությունը և հակվածությունը:

1.2. Հիմնական դրույթներ

- *Էթիկան և պրակտիկան⁶ սերտորեն կապված են.* վարքը կարող է լինել կամ չլինել էթիկական, կախված նրանից, թե արդյոք այն նպաստում է անձի և այլ մարդկանց բարեկեցությանը:
- *Էթիկան ընդհանուր հայեցակարգ է, որն ուղղորդում է պրակտիկ մասնագետին ծառայություններ մատուցելիս և մշտապես կազմում է պրակտիկայի հիմքը:* Այն չի սահմանափակվում դժվար և պրոբլեմատիկ իրավիճակների լուծմամբ:
- *Էթիկան մատնացույց է անում այն արժեքները, որոնք օգնում են մարդկանց իրագործել իրենց պոտենցիալ հնարավորությունները: Արժեքները հիմք են հանդիսանում էթիկական սկզբունքների համար, որոնք վերաբերում են դեոնոլոգիական նորմերի հիմքում ընկած արժեքները և սկզբունքները կյանքի կոչելու ճանապարհներին և հանդիսանում են մասնագիտական պրակտիկայի ուղեցույցներ:*

1.3. Էթիկական կողեքսի նկատմամբ մոտեցումը

ՏՎԵԱ-ի էթիկական կողեքսը մատնացույց է անում հիմնարար արժեքները: Այս արժեքները առաջարկում են հղման համակարգ, որը տեղեկացնում է պրակտիկ մասնագետներին այն անձնական և մասնագիտական վարքագծի մասին, որը նպաստում է մասնագիտական հարաբերությունների մեջ ընդգրկված մարդկանց բարեկեցությանը: Այս արժեքները օգնում են ստեղծել էթիկական և մասնագիտական վարքի չափանիշներ: Կողեքսն իր մեջ ներառում է հիմնարար դրույթներ արժեքների և հարակից էթիկական սկզբունքների մասին, որոնք օգտագործվում են որպես հիմք օգնող մասնագիտություններում պրակտիկայի էթիկական բնույթն ապահովելու

⁴ Այս սահմանումը վերցված է իտալերեն բառարանից՝ Dizionario delle Idee, Sansoni, 1977, p. 392.

⁵ Էթիկան նեղ իմաստով բարոյականության հոմանիշն է ("Էթոս" և "Մոս" հունարեն և լատիներեն նշանակում են սովորույթներ, ավանդույթներ) և վերաբերում է ինքնաիրականացման նպատակով ինքնազննման կարողությանը: Այսպիսով, մեր գործողությունները էթիկական են, երբ մենք իրագործում ենք մեր պոտենցիալը և հաշվի ենք առնում այլ մարդկանց պոտենցիալը:

⁶ *Պրակտիկա* նշանակում է օգնության տրամադրման մասնագիտական հարաբերություն, որը առկա է, երբ մասնագետն ու օգտագործողը համաձայնության են գալիս ստույգ պայմանագրի (կոնտրակտի) վերաբերյալ: Սա վերաբերում է մասնագիտացման բոլոր 4 ոլորտներին՝ թերապիա, խորհրդատվություն, կրթություն և կազմակերպություններ. այս 4 ոլորտներում կիրառումը կարող է տարբեր լինել, սակայն մտածելակերպը նույնն է:

համար:

Դեռնթոլոգիական կողմերը (մասնագիտական էթիկայի կողմեր) առաջարկում է կարգադրիչ կանոնների մի ամբողջություն օգտագործողի իրավունքների պաշտպանության նպատակով պրակտիկ մասնագետի վարքը կարգավորելու համար: Այս կանոնները սերտորեն կապված են երկրի օրենսդրության հետ և տարբեր մասնագիտական կազմակերպություններում յուրահատուկ բնույթ ունեն:

Էթիկական և դեռնթոլոգիական կողմերի նպատակն է ապահովել մարդու իրավունքների իրականացումը, ինչպես նաև ազգային օրենսդրության շրջանակներում պաշտպանվածությունը:

Այդ պատճառով այս Կողմերում շեշտվում է հստակ արժեքների և էթիկական սկզբունքների հետևելու կարևորությունը՝ հղման մի համակարգ ստեղծելու համար, որը թույլ կտա տարաբնույթ իրավիճակների լուծումներ գտնել՝ նույնիսկ եթե այդ մասնակի իրավիճակները էթիկական կողմերում նկարագրված չեն:

Պրակտիկայում էթիկայի նկատմամբ այսպիսի մոտեցումը շեշտադրում է ոչ թե զուտ մի շարք կանոնների հետևելը, որոնք սահմանում են թույլատրելի և անթույլատրելի վարքը, այլ հանգեցնում է էթիկան արժեքների և սկզբունքների, որոնցով դեկավարվում են տրանզակտ վերլուծության պրակտիկ մասնագետները: Կարող են հանդիպել իրավիճակներ, որոնք չեն ընդգրկված որոշակի կողմերի մեջ, կամ կարող են լինել դեպքեր, երբ հարկավոր է սկզբունքների միջև ընտրություն կատարել: Այս պարագայում, ընտրված ցանկացած գործելակերպ կհամարվի ոչ էթիկական, եթե հնարավոր է ցույց տալ, որ պրակտիկ մասնագետը պատշաճ կերպով հաշվի չի առել ՏՎ արժեքներն ու սկզբունքները: Բերված բոլոր օրինակները մշակվել են որպես լավ պրակցիկայի ցուցանիշ և չպետք է ընկալվեն որպես սպառիչ:

Ավելին, էթիկայի ըմբռնումը որպես հիմնարար արժեքների և սկզբունքների ամբողջություն օգնում է հաշվի առնել ՏՎԵԱ-ի համայնքի ներքո մշակութային տարբերությունները և ազգային կազմակերպություններին ապահովում է ազգային դեռնթոլոգիական կողմերը (մասնագիտական էթիկայի կողմեր) դրա հետ ինտեգրացնելու օրինակ:

1.4. Հիմնական նպատակներ

1. Ամրապնդել պրակտիկ մասնագետի էթիկայի (արժեքների և սկզբունքների, ինչպես նաև նորմերի և արգելքների) կտրվածքով մտածելակերպը և գիտակցությունը, որպեսզի ստեղծել հղման համակարգ մարդկանց հետ կապված իրավիճակների վերլուծության համար:
2. ՏՎԵԱ-ի անդամներին տրամադրել էթիկայի հստակ հայեցակարգ, որպեսզի պրակտիկ մասնագետն ունենա չափանիշներ, որոնցով նա կկատարի իր էթիկական դիրքորոշման ընտրությունը և կօգտագործի հայեցակարգը որպես օրինակ ցանկացած պրակտիկ իրավիճակ վերլուծելու համար:
3. Արժեքներից ածանցված էթիկական սկզբունքների կիրառման օրինակներ բերել, որպեսզի պրակտիկ մասնագետները հասկանան այդ երկուսի միջև կապը, այլ ոչ թե պարզապես գերհարմարվեն կանոնների մի ամբողջության:
4. Ցույց տալ ինքնազննման անհրաժեշտությունը՝ արժեքների և էթիկական սկզբունքների, այլ ոչ կանոնների և անհրաժեշտ վարքաձևերի մի շարքի անդրադառնալու միջոցով:

1.5. Պարտավորություններ

Ելնելով նրանից, որ ՏՎԵԱ-ն իր բնույթով ասոցիացիաների ասոցիացիա է, այս

կետը բաղկացած է երկու մասերից. առաջինը վերաբերվում է ասոցիացիաներին, իսկ երկրորդը՝ ՏՎԵԱ-ի առանձին անդամներին: Երկու տիպի անդամակցությունն էլ պարունակում են ՏՎԵԱ-ի մեջ ընդգրկված լինելու ակնհայտ կերպով արտահայտված համաձայնություն:

1.5.1. ՏՎԵԱ-ին անդամակցած Ազգային Ասոցիացիաների պարտավորությունները

ՏՎԵԱ-ին անդամակցած Ազգային Ասոցիացիան համաձայն է այս Էթիկական Կոդեքսի հետ և պարտավորվում է.

- Օգտագործել ՏՎԵԱ-ի Էթիկական Կոդեքսը որպես մոդել և դրա բովանդակությունը ինտեգրացնել ՏՎ մասնագետների տարբեր ոլորտներում գործունեությանը վերաբերող գոյություն ունեցող ազգային էթիկական և դեոնոլոգիական կոդեքսների բովանդակության հետ, հաշվի առնելով մշակութային առանձնահատկությունները և ազգային օրենսդրությունը և համոզվել, որ ասոցիացիայի բոլոր անդամները միացել են այս Կոդեքսին, ստորագրելով այն, և իրենց պրակտիկ գործունեության մեջ դեկլարավում են Կոդեքսի նորմերով:
- Պատասխանատվություն կրել լոկալ իրավիճակների լուծման համար, որոնցում Ասոցիացիայի անդամի մասնագիտական վարքը հակասում է Ազգային Էթիկական կոդեքսին, ՏՎԵԱ-ի Կոդեքսին կամ ազգային օրենսդրությանը:
- Դիմել ՏՎԵԱ-ի Էթիկական հանձնաժողովին առանձին անդամների կամ անդամակից կազմակերպությունների հետ կապված բոլոր չլուծված հարցերով և օգնություն հայցել իրավիճակը պարզելու և վերջնական լուծում գտնելու համար:

1.5.2. Ազգային Ասոցիացիաների անդամների պարտավորությունները

ՏՎԵԱ-ին անդամակից ցանկացած անհատական անդամ (սովորաբար որպես Ազգային Ասոցիացիայի անդամ) համաձայն է ՏՎԵԱ-ի Էթիկական կոդեքսի հետ և պարտավորվում է.

- օգտագործել այն որպես հղման համակարգ իր էթիկական մտածողության և իմաստավորման համար և դեկլարվել դրանով իր պրակտիկայում
- գործել իր երկրի Դեոնոլոգիական Կոդեքսին (մասնագիտական էթիկայի կոդեքս) համապատասխան՝ հաշվի առնելով իր մասնագիտության առանձնահատկությունները:

Ազգային Ասոցիացիայի անդամը պատասխանատու է իր մասնագիտական վարքի համար և գիտակցում է իր պարտավորությունը ՏՎԵԱ-ի համայնքի նկատմամբ: Եթե տվյալ վարքը չի համապատասխանում ՏՎԵԱ-ի և Ազգային Կոդեքսներին, այն ենթակա է ազգային մարմնի կողմից դիտարկման և գնահատման, իսկ անհրաժեշտության դեպքում ազգային մարմինը նշանակում է սանկցիաներ:

ՏՎԵԱ-ի բոլոր թրեյներները պարտավորվում են քննարկել և իմաստավորել այս Կոդեքսը ցանկացած ուղղվածության թրեյնինգների ընթացքում:

Բաժին II. Էթիկական կողերսի բուն էությունը

Էթիկան գիտություն է, որը բացահայտում է հիմնարար արժեքները, որոնք նպաստում են մարդու ինքնագիտակցության գործընթացին:

Արժեքները բխում են էքզիստենցիալ և փիլիսոփայական հայացքներից, առկա են բոլոր մարդկանց մոտ և նպաստում են անձի և շրջապատող մարդկանց բարեկեցությանը: Դրանք համընդհանուր են և մշակութային նորմերից և անհատական պատկերացումներից դուրս են:

Էթիկական սկզբունքները ածանցված են արժեքներից և մատնանշում են այն դիրքորոշումները, որոնք անհրաժեշտ են արժեքները մասնագիտական պրակտիկայում իրագործելու համար: Այս պատճառով, անհրաժեշտ է սկզբունքները մեկնաբանել մշակույթի տեսանկյունից: Որոշ սկզբունքներ կարող են տարբեր կերպ արտահայտվել երկու տարբեր մշակույթներում: Դրանք նաև նշանակալի են բոլոր նրանց համար, ովքեր ուղղակի կամ անուղղակի կերպով առնչվում են պրակտիկ մասնագետի հետ:

Այս բաժնում կսահմանվեն կոնկրետ արժեքներ և էթիկական սկզբունքներ: Այս արժեքները առաջնային նշանակություն ունեն ինչպես անձնային, այնպես էլ միջանձնային առողջ զարգացման համար: Այդ պատճառով այս Կողերսում ներկայացված արժեքները համապատասխանում են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի դրույթներին⁷:

Էթիկական սկզբունքներին հակիրճ սահմանում է տրվում: Դրանք անհրաժեշտ է կիրառել պրակտիկայում, հաշվի առնելով գործունեության մեջ ուղղակի կամ անուղղակի կերպով ներգրավված բոլոր մարդկանց: Այդ պատճառով ամեն սկզբունքի համար նշվում է հնարավոր խնդիրների ցանկ, որոնց անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որպեսզի վարքը էթիկական լինի այցելուի, սեփական անձի՝ որպես պրակտիկ մասնագետի, թրեյնինգների մասնակիցների, գործընկերների, շրջապատող մարդկանց/համայնքի նկատմամբ:

II.1. Հիմնարար արժեքներ

Արժեքը ցույց է տալիս, թե ինչն է հանդիսանում անձի համար հիմնարար՝ իր և այլ մարդկանց անձնային զարգացմանը և ինքնաիրականացմանը նպաստելու համար: Այն հղում է կատարում բնական իրավունքին, որն օգնում է մարդկանց հարգալից վարք դրսևորել սեփական անձի և այլ մարդկանց նկատմամբ: Հետևյալ արժեքները վերաբերում են Մարդու իրավունքներին և ընդգրկված են Մարդու իրավունքների ունիվերսալ հռչակագրի մեջ:

Տվյալ հղման համակարգը նաև համահունչ է Տրագնակտ վերլուծության էքզիստենցիալ և փիլիսոփայական դրույթներին: Շատ արժեքների նկատմամբ կարող է էքստրապոլյացիա կատարվել, այդ պատճառով ՏՎԵԱ-ի անդամները չպետք է այս ցանկը սպառիչ համարեն:

Նկատի ունենալով մասնագիտական գործունեության բազմազանությունը, հիմնարար արժեքները հետևյալն են.

⁷ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948թ. դեկտեմբերի 10-ին:

1. Մարդկանց արժանապատվությունը⁸

Յուրաքանչյուր ոք արժեքավոր է՝ անկախ սեռից, սոցիալական դիրքից, կրոնական հայացքներից, ազգային ծագումից, ֆիզիկական և մտավոր առողջությունից, քաղաքական համոզմունքներից, սեքսուալ կողմնորոշումից և այլն:

2. Բնքնորոշում⁹

Յուրաքանչյուր ոք ունի ազատություն իր երկրի օրենսդրության սահմաններում որոշելու իր ապագան՝ սեփական և այլ անձանց կարիքները պատշաճ կերպով հաշվի առնելով: Յուրաքանչյուր ոք կարող է դասեր քաղել իր փորձից և ղեկավարել ինքն իրեն՝ ի նկատի ունենալով աշխարհի բնույթը և ուրիշների ազատությունները:

3. Առողջություն¹⁰

Ֆիզիկական և մտավոր կայունությունը յուրաքանչյուր մարդու իրավունքն է, և անհրաժեշտ է այն ակտիվորեն ապահովել:

4. Անվտանգություն¹¹

Յուրաքանչյուր մարդու անհրաժեշտ է ընձեռել հնարավորություն ուսումնասիրել միջավայրը և մեծանալ մի միջավայրում, որը հնարավորություն է տալիս իրեն ապահով զգալ:

5. Փոխադարձություն¹²

Յուրաքանչյուր ոք՝ ապրելով և մեծանալով միջանձնային միջավայրում փոխադարձ կերպով մասնակցում է ուրիշների բարեկեցության մեջ, նրանց հետ զարգացնելով փոխկախվածություն՝ իր և ուրիշների անվտանգությունը ապահովելու նպատակով:

Այս արժեքները անմիջականորեն կապակցված են և ներգործում են ՏՎ պրակտիկ մասնագետների վրա իրենց մասնագիտական պրակտիկայում:

II.2. Հիմնարար էթիկական սկզբունքներ

Արժեքների բնույթից և մարդու կյանքում դրանց նշանակությունից ելնելով, ինչպես նաև ամեն մարդու նկատմամբ հարգանքը և նրա իրավունքները ապահովելու համար անհրաժեշտ է ճշգրտորեն սահմանել վարքի ուղեցույցներ, որոնք խիստ կերպով կապված են արժեքների հետ: Էթիկական սկզբունքները ածանցված են արժեքներից և հանդիսանում են պրակտիկայի ուղեցույց անձի բարեկեցությանը, զարգացմանը և աճին նպաստելու համար: Դրանք ղեկավարող սկզբունքներ են և էթիկական վարքի չափանիշներ են առաջարկում:

Արժեքները օգտագործելով որպես սկզբնակետ, հնարավոր է դառնում սահմանել էթիկական սկզբունքների մի ամբողջություն: Դրանցից հիմնականները հետևյալն են.

- *Հարգանք*
- *Լիազորությունների հանձնում*

⁸ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 1, 2, 3 հոդվածներ (տե՛ս հավելվածը):

⁹ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 18, 19 հոդվածներ (տե՛ս հավելվածը):

¹⁰ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 24 և 25 հոդվածներ (տե՛ս հավելվածը):

¹¹ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 22 և 23 հոդվածներ (տե՛ս հավելվածը):

¹² Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 29 հոդված (տե՛ս հավելվածը):

- Պաշտպանություն
- Պատասխանատվություն
- Հարաբերություններում պատրաստակամություն

Անհրաժեշտ է, որպեսզի օգնող մասնագիտությունների ներքո էթիկական սկզբունքները կիրառվեն տարբեր ոլորտներում էթիկական վարքին նպաստելու համար: Ուշադրության հիմնական օբյեկտները հետևյալն են.

- Այցելուները
- Պրակտիկ մասնագետն ինքը
- Թրեյնինգների մասնակիցները
- Գործընկերները
- Շրջապատող մարդիկ/Համայնքը

ՏՎ պրակտիկ մասնագետները հաշվի են առնում արժեքները և էթիկական սկզբունքները և վերլուծում են իրենց գործունեությունը, որպեսզի որոշեն, թե ինչպես վերաբերվել և ինչպես վարվել վերը նշված օբյեկտների նկատմամբ: Պրակտիկ մասնագետը վերլուծում է իրավիճակները էթիկական սկզբունքների պրակտիկ գործունեության վրա ազդեցության տեսանկյունից և ընտրում է վարք՝ հաշվի առնելով գործոնների լայն շրջանակ, օրինակ՝ այցելուին, ինքն իրեն, միջավայրը և այլն:

Էթիկական ամեն սկզբունքի հակիրճ սահմանումից հետո բերվում է մի ցանկ, որում մատնանշվում են այն կետերը, որոնց պետք է ուշադրություն դարձվի: Դա թույլ է տալիս պրակտիկ մասնագետին գնահատել իրավիճակը և պատասխանատվություն վերցնել իր ընտրության համար: Նախ և առաջ, կան լավ պրակտիկայի օրինակներ, որոնք մշակվել են այդ էթիկական սկզբունքին ի պատասխան: Ցանկը պարունակում է չափանիշներ, որոնք անհրաժեշտ է կիրառել ՏՎ պրակտիկայում: Դրանք մղում են պրակտիկ մասնագետին ինքն իր նկատմամբ հարցադրումներ անել՝ սկզբունքները պրակտիկայի վերաձելու համար: Բերված ցանկը սպառնիչ չէ, և ցանկացած պրակտիկ մասնագետ նշված 5 ոլորտների դիտարկման շնորհիվ կգտնի իր սեփական լուծումը: Դա հնարավորություն կտա պրակտիկ մասնագետին պարզել իր վարքի շարժառիթները:

1. *Հարգանքը* ամեն անձի նկատմամբ որպես մարդ՝ որևէ բնութագրից կամ որակից անկախ:

- **այցելուների նկատմամբ** – պրակտիկ մասնագետը ամբողջությամբ հաշվի է առնում և ձգտում է հասկանալ ամեն անհատի անձնական տեսակետը: Դա կօգնի անձին համապատասխանել հայացքների իր սեփական համակարգին: Պրակտիկ մասնագետն այցելուին տրամադրում է հնարավոր ամենաբարձր որակի ծառայություններ: Նա ապահովում է անվտանգ և մասնագիտական միջավայր և, գիտակցելով իր դիրքը և դրանով պայմանավորված իր իշխանության չափը, զգույշ է վարվում, որպեսզի ստեղծի վստահելի միջավայր՝ խուսափելով ցանկացած իրավիճակից, որում որևէ մեկը շահագործվում է և այլն:
- **ինքն իր նկատմամբ** – պրակտիկ մասնագետը ի նկատի է ունենում իր սեփական տեսանկյունը, դժվարությունները, նախապատվությունները և փոխանցում է այլ կոմպետենտ մասնագետի բոլոր այն այցելուներին կամ իրավիճակները, որոնց հետ նա չի ցանկանում կամ չի կարող գործ ունենալ:
- **թրեյնինգների մասնակիցների նկատմամբ** – թրեյները, գիտակցելով թրեյնինգի մասնակիցների գիտելիքների մակարդակը, նրանց տրամադրում է

համապատասխան աջակցություն, բոլոր անհրաժեշտ նյութերը և բաց է նրա համար, որպեսզի քննարկի դասավանդման իր անձնական ոճը, որպեսզի համապատասխանի թրեյնինգի մասնակցի ուսումնական պահանջներին և այլն:

- **գործընկերների նկատմամբ** – պրակտիկ մասնագետը գիտակցում է իր գործընկերների մասնագիտական մակարդակը և եթե նրան որևէ բան է անհանգստացնում, նա հարցը քննարկում է անմիջապես այդ գործընկերոջ/ուհու հետ: Պատասխան ստանալուց հետո, պրակտիկ մասնագետը հարցի վերաբերյալ իր ինքնուրույն եզրակացությունն է կատարում և այլն:
- **համայնքի նկատմամբ** – պրակտիկ մասնագետը հաշվի է առնում իր համայնքի ուրույն մշակույթը և չի ձգտում իր սեփական արժեքները պարտադրել և այլն:

2. Լիազորությունների հանձնումը ընդգծում է ամեն անձի աճի խթանման կարևորությունը:

- **այցելուների նկատմամբ** – պրակտիկ մասնագետը պարտավորվում է աշխատել այցելուների մոտ իրենց սեփական արժանապատվության, պատասխանատվության և իրավունքների գիտակցության զարգացման ուղղությամբ և այլն:
- **ինքն իր նկատմամբ** – պրակտիկ մասնագետը իր մասնագիտական ոլորտում շարունակական ուսումնառության մեջ է գտնվում, որպեսզի ավելացնի իր գիտելիքները և ապահովի իր մասնագիտական և անձնային աճը և այլն:
- **թրեյնինգների մասնակիցների նկատմամբ** – պրակտիկ մասնագետը գնահատում է իր թրեյնինգի մասնակիցների կոմպետենտությունը և հնարավորություն է ընձեռում նրանց աճել, զարգացնել իրենց ներուժը և բարեկեցությունը և այլն:
- **գործընկերների նկատմամբ** – պրակտիկ մասնագետը հարգում է իր գործընկերների ներդրումները և նրանց հնարավորություններ է ստեղծում իրենց մասնագիտական մակարդակի բարձրացման համար՝ ձգտելով կիսվել իր փորձառությամբ իր բացահայտումները թաքցնելու փոխարեն և այլն:
- **համայնքի նկատմամբ** – պրակտիկ մասնագետի մտածելակերպը հիմնված է ավելի լայն համայնքի, ինչպես նաև անհատի բարեկեցության վրա և այլն:

3. Պաշտպանությունը ենթադրում է սեփական անձի և այլ մարդկանց մասին հոգատարություն (ֆիզիկապես, հոգեպես և այլն)՝ ի նկատի ունենալով ամեն անձի ինքնատիպությունը և արժեքը:

- **այցելուների նկատմամբ** – Պրակտիկ մասնագետը առաջարկում է համապատասխան ծառայություններ այցելուներին՝ ապահովելով անվտանգ աշխատանքային միջավայր (օրինակ՝ գաղտնապահություն, ֆիզիկական անվտանգություն, բարձր ռիսկի հետ կապված միջամտությունների համար ինֆորմացված համաձայնություն) և գիտակցելով այցելուի ցանկացած կործանարար (դեստրուկտիվ) հակում: Պրակտիկ մասնագետը չի ներգրավվում կամ պահպանում մասնագիտական պայմանագիր (կոնտրակտ), որտեղ այլ գործունեություն կամ հարաբերություններ կարող են վտանգի տակ դնել մասնագիտական պայմանագիրը (G)¹³: Նա պահպանում է գաղտնապահությունը նույնիսկ երբ թերապևտիկ հարաբերությունները ավարտվել են (H) և այլն:
- **ինքն իր նկատմամբ** – Պրակտիկ մասնագետը հոգ է տանում իր սեփական արժեքների և ուսումնական գործընթացի մասին և հրաժարվում է աշխատել այն իրավիճակներում, որոնք ենթադրում են ներանձնային կոնֆլիկտ կամ որոնց

¹³ Փակագծերում տառերը վերաբերում են ՏՎԵԱ-ի նախկին Էթիկական կոդեքսին:

համար անհրաժեշտ է ավելի բարձր մակարդակի կոմպետենտություն: Նա հոգ է տանում իր անվտանգության մասին և որոշում է կասեցնել այցելուի հետ հարաբերությունները, եթե ունենում է մի ֆիզիկական զգացողություն կամ ապրում է մի հոգեվիճակ, որը նվազեցնում է այցելուի հետ արդյունավետ և կոմպետենտ աշխատելու նրա ունակությունը (K) և այլն:

- **թրեյնինգների մասնակիցների նկատմամբ** – Պրակտիկ մասնագետը մղում է թրեյնինգների մասնակիցներին ճանաչել իրենց նախապատվությունները և սահմանափակումները, որպեսզի պաշտպանեն իրենք իրենց և այցելուներին ոչ պատշաճ կամ վնասակար միջամտություններից: Նա խթանում է թրեյնինգների մասնակիցներին, որպեսզի նրանք հոգան իրենց անձնային և մասնագիտական աճի մասին, դիտարկելով նրանց անձնային ոճերը և անձնական խնդիրները, որոնք պատնեշ են հանդիսանում իրենց սեփական և այլ մարդկանց անվտանգության համար:
- **գործընկերների նկատմամբ** – Պրակտիկ մասնագետը պատրաստ է կոնֆրոնտացիայի ենթարկել գործընկերոջ ոչ հարգալից արտահայտությունները և գործողությունները (B) և այլն:
- **համայնքի նկատմամբ** – Պրակտիկ մասնագետը այցելուին մատուցում է ծառայություններ՝ լիովին համապատասխանելով երկրի գործող օրենսդրությանը (I) և այլն:

4. Պատասխանատվությունը ենթադրում է, որ մենք՝ որպես այցելուներ, թրեյներներ, թերապևտներ, սուպերվիզորներ, խորհրդատուներ և այլն հաշվի ենք առնում մեր գործողությունների հետևանքները:

- **այցելուների նկատմամբ** – Պրակտիկ մասնագետը կապում է հստակ պայմանագիր և մասնագիտական հարաբերությունները դադարեցնում է, երբ այցելուն ի վիճակի չէ կամ չի ցանկանում իրեն դրսևորել ավտոնոմ կերպով (E): Նա ոչ մի կերպ չի շահագործում այցելուին (F) և զերծ է մնում այն գործողություններից, որոնք կարող են միտումնավոր կամ ակամա վնաս պատճառել այցելուին և այլն:
- **ինքն իր նկատմամբ** – Նա հաշվի է առնում իր դիրքի ազդեցությունը այցելուի վրա և հոգատար է՝ այցելուին արձագանք տալով այնպես, որպեսզի նպաստի նրա բարեկեցությանը և բացառի որևէ չարաշահում և այլն:
- **թրեյնինգների մասնակիցների նկատմամբ** – Պրակտիկ մասնագետը գիտակցում է մասնակիցների ուսումնական պահանջումները և ուսման համար տրամադրում է նրանց անհրաժեշտ միջոցներ և ինֆորմացիա: Եթե ուսանողը չի ցանկանում փոխել առկա որևէ ոչ էթիկական իրավիճակ, պրակտիկ մասնագետը կոնֆրոնտացիա է կատարում նրա նկատմամբ և որոշակի էթիկական գործելակերպ է իրականացնում և այլն:
- **գործընկերների նկատմամբ** – Պրակտիկ մասնագետը իր վրա պատասխանատվություն է վերցնում իր գործընկերոջ նկատմամբ կոնֆրոնտացիա կատարել, եթե հիմքեր ունի մտածելու, որ այդ գործընկերը ոչ էթիկական վարք է դրսևորում. իրավիճակը լուծել չկարողանալու դեպքում նա տվյալ գործընկերոջ մասին զեկուցում է համապատասխան էթիկական մարմնին (L) և այլն:
- **համայնքի նկատմամբ** – Պրակտիկ մասնագետն իր մասնագիտական պարտքն է համարում իր համայնքի հոգեբանական և ֆիզիկական առողջության մասին հոգ տանելը:

5. Հարաբերություններում պատրաստակամությունը նշանակում է այցելուի բարեկեցության հարցով անկեղծ շահագրգռվածություն:

- **այցելուների նկատմամբ** – Պրակտիկ մասնագետը զգույշ է և հաշվի է առնում


անձի ներաշխարհը և դրա վրա իր ազդեցությունը և այլն:

- **թրեյնինգների մասնակիցների նկատմամբ** – Պրակտիկ մասնագետը սովորեցնում է ուսանողներին հաշվի առնել իրենց այցելուների ներաշխարհը:
- **գործընկերների նկատմամբ** – Նա մասնակցում է կոնֆերանսների և այլն՝ կիսվելով իր նվաճումներով:
- **համայնքի նկատմամբ** – Պրակտիկ մասնագետը տեղյակ է և ակտիվ կերպով մասնակցում է իր համայնքի կյանքին և այլն:

Էթիկական որոշում ընդունելու գործում պրակտիկ մասնագետին օգնության են գալիս էթիկական սկզբունքները, որոնք նրան հնարավորություն են տալիս գնահատել տարբեր իրավիճակներ և այդպիսով գործելակերպի մտածված ընտրություն կատարել: Այնուամենայնիվ, պրակտիկ մասնագետը հնարավոր է հանդիպի իրավիճակների, որտեղ անհնարին է լուծել հարցին վերաբերող բոլոր սկզբունքների միջև հակասությունը: Չնայած այս դժվարությանը, անհրաժեշտ է, որպեսզի պրակտիկ մասնագետը դիտարկի կոնկրետ իրավիճակը ու տարբեր լուծումները և պատասխանատու լինի իր որոշման համար:

Նկար 1ում ներկայացված է Էթիկական կողեքսի բուն էության սինթեզը: Էթիկայի տեսանկյունից իրավիճակը գնահատելիս օգտագործվում են երեք տարբեր մակարդակներ:

1. Առաջին մակարդակ՝ *Հիմնարար արժեքներ*, որոնք կիրառելի են ցանկացած անձի նկատմամբ և համընդհանուր են:
2. Երկրորդ մակարդակ՝ *Էթիկական սկզբունքները* մեկնաբանվում են մշակույթի տեսանկյունից և ենթադրում են տարբերություններ տարբեր մասնագիտություններում:
3. Երրորդ մակարդակ՝ *Թիրախային խումբը* վերաբերում է մարդկանց և իրավիճակներին, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել պրակտիկայի էթիկական բնույթն ապահովելու համար:



Նկար 1. Էթիկական Կողեքսի բուն էության սինթեզը. էթիկական պրակտիկայի համար վերլուծության երեք մակարդակները

Հավելված

ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԸՆԴՆԱՆՈՒՐ ՀՈՉԱԿԱԳՐԻ ՀՈՂՎԱԾՆԵՐ (Ընդունված և հռչակված 1948թ.)

Հոդված 1. Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Նրանք օժտված են բանականությամբ ու խղճով և պարտավոր են միմյանց վերաբերվել եղբայրության ոգով:

Հոդված 2. Յուրաքանչյուր ոք ունի սույն Հռչակագրում ամրագրված բոլոր իրավունքներն ու ազատությունները՝ առանց որևէ տարբերակման այնպիսի հիմքերով, ինչպիսին են ռասան, մաշկի գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ համոզմունքները, ազգային կամ սոցիալական ծագումը, գույքային դրությունը, ծնունդը կամ այլ կարգավիճակ: Ավելին, չպետք է կատարվի որևէ տարբերակում՝ ելնելով այն երկրի կամ տարածքի քաղաքական, իրավական կամ միջազգային կարգավիճակից, որին պատկանում է անձը, լինի այն անկախ, խնամարկյալ, ոչ ինքնավար կամ ինքնիշխանության որևէ այլ սահմանափակումով:

Հոդված 3. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի, ազատության և անձի անձեռնմխելիության իրավունք:

Հոդված 18. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի ու կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատություն և միանձնյա կամ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով իր կրոնը կամ համոզմունքը քարոզելու, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու ազատություն:

Հոդված 19. Յուրաքանչյուր ոք ունի կարծիքի և այն արտահայտելու ազատություն. այս իրավունքը ներառում է առանց միջամտության կարծիքներ ունենալու, անկախ պետական սահմաններից տեղեկատվություն ու գաղափարներ փնտրելու, ցանկացած լրատվամիջոցով ստանալու ու տարածելու ազատությունը:

Հոդված 22. Յուրաքանչյուր ոք, որպես հասարակության անդամ, ունի սոցիալական ապահովության իրավունք և, ազգային ջանքերի ու միջազգային համագործակցության միջոցով, ինչպես նաև՝ յուրաքանչյուր պետության կազմակերպմանն ու ռեսուրսներին համապատասխան օգտվում է իր արժանապատվության և իր անձի ազատ զարգացման համար անհրաժեշտ տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքներից:

Հոդված 23. 1. Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի, աշխատանքի ազատ ընտրության, արդար ու մպաստավոր աշխատանքային պայմանների և գործազրկությունից պաշտպանվածության իրավունք: 2. Յուրաքանչյուր ոք ունի հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության իրավունք՝ առանց որևէ խտրականության: 3. Յուրաքանչյուր աշխատող ունի իր և իր ընտանիքի համար մարդկային արժանապատվությանը հարիր գոյություն ապահովող արդար ու նպաստավոր վարձատրության և, անհրաժեշտության դեպքում, այն սոցիալական ապահովության այլ միջոցներով լրացնելու իրավունք: 4. Յուրաքանչյուր ոք ունի արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունք՝ հանուն իր շահերի պաշտպանության:

Հոդված 24. Յուրաքանչյուր ոք ունի հանգստի ու ժամանցի, այդ թվում՝ աշխատանքային ժամերի ողջամիտ սահմանափակման և վճարովի պարբերական արձակուրդի իրավունք:

Հոդված 25. 1. Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի առողջության ու բարեկեցության համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ սննդի, հագուստի, բնակարանի և առողջապահության ու սոցիալական անհրաժեշտ ծառայությունների իրավունք, ինչպես նաև ապահովության իրավունք՝ գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիանալու, ծերության կամ իր կամքից անկախ հանգամանքներում գոյության այլ միջոցներից զրկվելու դեպքում:
2. Մայրությունն ու մանկությունը հատուկ հոգածության և օժանդակության իրավունք ունեն: Ամուսնության մեջ կամ դրանից դուրս ծնված բոլոր երեխաներն օգտվում են սոցիալական միևնույն պաշտպանությունից:

Հոդված 29. 1. Յուրաքանչյուր ոք պարտականություններ ունի այն համայնքի առջև, ուր և միայն հնարավոր է նրա անձի ազատ ու լիարժեք զարգացումը: 2. Իր իրավունքներն ու ազատություններն իրակացնելիս, յուրաքանչյուր ոք ենթակա է միմիայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով՝ բացառապես ուրիշների իրավունքների և ազատությունների պատշաճ ճանաչումն ու հարգանքը երաշխավորելու և ժողովրդավարական հասարակությունում բարոյական, հասարակական կարգի և ընդհանուր բարեկեցության արդարացի պահանջներն ապահովելու նպատակով: 3. Այս իրավունքների ու ազատությունների իրականացումը ոչ մի դեպքում չպետք է հակասի Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին ու սկզբունքներին: